ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՅ ՔԱՂԱՔԻ ԿՈՍԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀՈՒՇԱԳԻՐ

Երկու հարևան երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման և բարձրաստիճան պաշտոնյաների փոխադարձ պայմանավորվածությունների իրականացման համար ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի հայ-իրանական հանձնաժողովի Խոյի կուսակալությունը և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը ընդլայնում են տնտեսական, մշակութային , մարզական համագործակցությունը՝ հիմք ընդունելով՝ 05.11.2010 թվականի Խոյ քաղաքում կնքված հուշագրի 9-րդ նիստի 1-6-2 կետի պահանջներից և համաձայնվում են հետևյալ կետերում փոխադարձ համագործակցության շարունակմանը:

1. Կողմերի միջև նախկինում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Պայմանավորվող կողմերը գործնականում կիրառելի կդարձնեն մարզական և տուրիստական խմբերի փոխադարձ այցելությունները:

2. Նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար հարաբերությունների մակարդակի զարգացման նպատակով կողմերն օժանդակելու են մասնագիտական խմբերի ստեղծմանը և կազմակերպելու համատեղ քննարկումներ հետևյալ ոլորտներում՝ տնտեսական, առևտրային և մշակութային՝ հյուրընկալվելով Խոյ քաղաքում մասնավոր սեկտորի տնտեսական ակտիվիստների: Հանդիպումների ժամանակացույցը կմշակվի երկկողմ պայմանավորվածությունների արդյունքում:

3.Կողմերը ընդգծեցին հանդիպումները՝ մշակութային, հասարակական և սպորտային հարաբերությունների խորացման և զարգացման նպատակով քաղաքապետերի՝ ՀՀ Վայոց ձորի մարզում/ Վայք, Եղեգնաձոր, Ջերմուկ/ ,քաղաքների և ԻԻՀ կողմից Խոյի քաղաքապետի հետ :

Հուշագիրը կնքվել է Եղեգնաձոր քաղաքում <<11>> 06 2015թվականին , բաղկացած է 3 կետերից հավասար իրավական ուժ ունեցող չորս օրինակից՝ հայերեն և պարսկերեն լեզուներով:

ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
Նահանգապետի տեղակալ	ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝
Խոյ քաղաքի կուսակալ՝	
Հոսեյն Սեյվանի Ասլ	Հարություն Սարգսյան